Կարապետյան Մարիամ
Երևանի պետական համալսարան
Mariam.karapetyan@ysu.am

ԼԵԶՎԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Abstract
PERSPECTIVES ON THE FUNCTIONAL STUDY OF LANGUAGE

The present article discusses the functional approach to the study of the language as one of the most fundamental means of its investigation.It overviews different classifications of the functions of the language inherent in linguistics, considering the scientific classification the main organizer of the objects and phenomena which discovers internal patterns defining developments and changes in the investigated objects.

***Key words**: Language, function, scientific classification*

РЕЗЮМЕ
ПЕРСПЕКТИВЫ ФУНКЦИОНАЛЬНОГО ИЗУЧЕНИЯ ЯЗЫКА

В настоящей статье рассматривается функциональный подход к изучению языка как один из фундаментальных методов его исследования.Дается обзор существующих классификаций функций языка, поскольку именно научная классификация позволяет исследовать объекты и явления окружающей среды, наблюдать происходящие в них изменения и развитие.

***Ключевые слова:** Язык, функция, научная классификация*

Ամփոփում

Լեզվի ուսումնասիրության առավել հիմնարար մոտեցումներից մեկը նրա գործառույթների դասակարգումն է: Գիտական դասակարգումը մեծ նշանակություն ունի թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն: Այն կազմակերպում է առարկաների և մեզ շրջապատող երևույթների գործընթացը, հնարավորություն է տալիս ներքին օրինաչափությունները հայտնաբերելու, որոնք սահմանում են հետազոտվող առարկաների զարգացումներն ու փոփոխությունները:

Բանալի բառեր՝ *լեզու, գործառույթ, գիտական դասակարգում*

Ժամանակակից մշակույթում լեզուն և նրա գործառական համակարգը անընդհատ փոփոխություններ են կրում: Հասարակական գործընթացներում հասարակական շերտերը փոփոխվելիս լեզվի գործառույթների տեսական իմաստավորման անհրաժեշտություն է առաջանում:

Լեզվի գործառույթների և դրանց տեսակների հարցում լեզվաբանները տարբեր կարծիքներ ունեն: Գործառույթների առանձնացման վերաբերյալ երկու տարբեր մոտեցումներ կան, որոնցից առաջինը վերաբերում է լեզվի ընդհանրացված նպատակներին, իսկ երկրորդը՝ ավելի մասնավոր պահերին, որոնք իրականացվում են ասույթներով: Այս մոտեցումները փախկապակցված են, քանի որ «…. առանձին ասույթների մանրառույթները (միկրոֆունկցիաները) լեզվի համընդգրկուն գերառույթի (մակրոֆունկցիայի) ենթակարգերն են և հակառակը, գերառույթներն իրացվում են տարբեր մանրառույթների միջնորդավորմամբ» (Ապրեսյան, 2010: 6):

Այդուհանդերձ, լեզվի գործառույթների քանակի վերաբերյալ նույնպես կարծիքները տարբեր են: Գ. Կոլշանսկին կարծում էր, որ լեզվի բնույթը նրան թույլ չի տալիս տարբերակել գործառույթները, և

բոլոր գործառույթները պետք է ամփոփվեն մի (հաղորդակցական) գործառույթի մեջ (Колшанский, 1962: 9):

Այս ամենը հաշվի առնելով՝ ոչ մի լեզվաբան չի ժխտում լեզվի հաղորդակցման գործառույթը, որը ուսումնասիրվել է լեզվաբանության մեջ իր ողջ պատմության ընթացքում՝ ելնելով նրանից, որ լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Այն թույլ է տալիս խոսողին արտահայտել իր մտքերը խոսակցին՝ հասցեատիրոջը հասկանալի եղանակով, իսկ խոսակցին՝ ընդունել, հասկանալ խոսողին: Լեզվի հաղորդակցման գործառույթը իրականացվում է այն բանի շնորհիվ, որ լեզուն նշանային համակարգ է, իսկ նշանները ստեղծված են տեղեկատվության փոխանակման համար:

Ինչպես ասվեց, լեզվաբանության մեջ լեզվի հաղորդակցման գործառույթը ուսումնասիրվել է լեզվաբանության ողջ պատմության ընթացքում և բազմաթիվ մեկնաբանություններ է ստացել ինչպես ամբողջական՝ մեկ գործառույթի, այնպես էլ տարբեր գործառույթների առումով:

Հաղորդակցման գործառույթն առաջնահերթորեն պայմանավորված է նրանով, որ լեզուն մարդկանց շփման միջոցն է: Այն թույլ է տալիս մեկ անհատին արտահայտել իր մտքերը, իսկ մյուսին՝ ընկալել և հասկանալ դրանք:

Հաղորդակցումն էական նշանակություն ունի մարդկային գործունեության տարբեր բնագավառներում: Ինչպես նշել է Անտուան դը Սենտ-Էքզյուպերին. «Մեզ տրված միակ ճշմարիտ շքեղությունը մարդկային հաղորդակցման շքեղությունն է» (Էքզյուպերի, 2017:33): Առանց հաղորդակցման անհնար է պատկերացնել որևէ հասարակություն: Այն մարդկային արժեքների, հոգևորի, միջանձնային և միջմշակութային հարաբերությունների ձևավորման գլխավոր գործոնն է:

Հաղորդակցման միջոցով է անհատը ինքնադրսևորվում և ինքնահաստատվում: Հաղորդակցումը հասարակական կյանքի

համապարփակ երևույթներից մեկն է։ «Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները։ Այն մարդկային գործունեության անհրաժեշտ պայմանն է՝ սերունդների կապի միջոցը՝ հանրային փորձի փոխանցման պայմանը՝ անձի ձևավորման կարևոր գործոններից մեկը» (Բալյան, 1983: 6)։

Հաղորդակցումն անհնար կլիներ առանց լեզվի։ Այլ կերպ ասած՝ լեզուն առաջացել է և գոյություն ունի նախ և առաջ նրա համար, որ մարդիկ կարողանան շփվել միմյանց հետ։ Լեզվի հաղորդակցման գործառույթն էլ գոյություն ունի այն պարզ պատճառով, որ լեզուն նշանային համակարգ է, իսկ նշաններն իրենց հերթին տեղեկատվությունը փոխանցելու համար են։

Հաղորդակցական լեզվաբանությունը լեզուն ուսումնասիրում է որպես խոսքային գործունեության դինամիկ համակարգ, այսինքն՝ լեզուն ուսումնասիրում է նրա ներքին կառուցվածքի առանձին տարրերի ամբողջությամբ՝ յուրաքանչյուր տարրը դիտարկելով որպես լեզվական համակարգի էական մաս։

Լեզվական մակարդակների փոխազդեցություններն ի հայտ են գալիս, երբ յուրաքանչյուր տարր իր ուրույն դերն է կատարում տեքստի հաղորդակցման գործառույթների համակարգում։

Կ. Արուտյունովան, շեշտելով լեզվի հաղորդակցման նպատակը, կարծում է, որ լեզուն «…. մարդկային հասարակության մեջ առաջացած և զարգացած …. նշանների համակարգ է, որը, ծառայելով հաղորակցման նպատակներին, արտահայտում է արտաքին աշխարհի մասին մարդու գիտելիքների ամբողջությունը» (Арутюнова, 1973: 24)։ Ահա թե ինչպես է մեկնաբանում այդ դերը Գ. Կոլշանսկին. «Լեզուն դառնում է հաղորդակցման զենք։ Իրար հետ շփվելով՝ մարդիկ փոխանակում են մտքեր, զգացմունքներ, ցանկություններ, հուզմունքներ, ազդում են միմյանց վրա և ընդհանուր հայտարարի են գալիս։ Լեզուն մարդկանց հնարավորություն է տալիս իրար հասկանալու և միմյանց հետ աշխատելու մարդկային գործունեության բոլոր ոլորտներում»

(Колшанский, 1962: 9): Իսկ Գ. Ջահուկյանն ընդհանրացնում է՝ չհակասելով Կոլշանսկուն. «Հաղորդակցման բնագավառի առանձնահատկություններով, խոսողի (գրողի) անհատական լեզվական հակումներով, ճաշակով ու սովորություններով, խոսքի իրադրությամբ, առարկայի բնույթով, նպատակադրությամբ և ներգործուն լինելու պահանջով պայմանավորված լեզվական տարբերությունները ոճական բնույթ ունեն» (Ջահուկյան, Խլղաթյան, 2007:3):

Ռ. Յակոբսոնը հաղորդակցությունը ներկայացնում է որպես «հաղորդողի՝ խոսողի, ընկալողի՝ խոսակցի՝ հասցեատիրոջ, հաղորդման փոխանցման, համատեքստի, շփման և նշակարգի գործոնների փոխազդեցություն» (Якобсон, 1965:374)՝ առանձնացնելով լեզվի վեց գործառույթ՝

- հուզարտահայտչական (emotive),
- բանաստեղծական (poetic),
- կամային (directive),
- վերաբերական (referential),
- շփման (phatic),
- անդրլեզվական (metalinguistic):

1. **Հուզարտահայտչական գործառույթ**: Հայտնի է, որ շատ լեզվական տարրեր իրենց խոսքային բողվանդակությամբ արտահայտում են բազմաթիվ հուզումներ՝ անկախ դրանց կիրառման համատեքստից: Բառային մակարդակում սա վերաբերում է մի շարք բառերի, որոնց գործառական նշանակությունը գնահատումն է ու հուզականությունը՝ ձայնարկություններ, վերաբերականներ (եղանակավորող բառեր), մակբայներ և այլն: Բոլոր արտահայտչական տարրերը լեզվական վերլուծության են ենթակա:

Լեզվի զուտ հուզական շերտը ներկայացված է ձայնարկություններով: Նրանք տարբերվում են թե՛ իրենց հնչյունային համակարգով, թե՛ շարահյուսական դերով (նախադասության անդամ չեն դառնում): Սակայն դրանք

հարստացնում են խոսքը հնչյունային, քերականական և բառային մակարդակներում:

Հուզաարտահայտչական գործառույթը կենտրոնացված է հասցեատիրոջ վրա, նպատակ ունի որոշակի հույզերի առկայությամբ համապատասխան տպավորություն թողնելու: Այդ պատճառով էլ այս գործառույթի համար Ա. Մարտին առաջ է քաշել «հուզաարտահայտչական» տերմինը: Լեզվի հուզական շերտում հիմնականում առկա են միջանկյալ բառերը: Այս գործառույթը հատուկ շեշտադրությամբ նրբերանգներ է հաղորդում տեքստին (Marty, 2010: 458): Ներկայացված իրազեկումը օբյեկտիվ գիտելիք չէ, որպես կանոն չի սահմանափակվում միայն ճանաչողական հայեցակետով: Այսինքն՝ երբ մարդ հասցեատիրոջը հաղորդում է մի տեղեկություն, որը կարող է պարունակել հուզական տարրեր՝ ցասում, ուրախություն, տխրություն և այլն, դա ներկայացնում է սուբյեկտիվ տեսանկյունից: Սակայն Յակոբսոնը նշում է, որ լեզուն «վերլուծելով ներկայացված տեղեկատվության տեսանկյունից՝ չպետք է սահմանափակենք լեզվի ճանաչողական հայեցակետի տեղեկատվության հասկացությունը» (Якобсон, 1965: 375):

2. **Բանաստեղծական գործառույթ**: Պոեզիայի տեսակները բազմազան են. յուրաքանչյուր տեսակ արտահայտում է իր լեզվամտածողությունը: Բանաստեղծության ամենաէական տարրը լեզուն է, բայց ոչ թե հասարակական կյանքի կենցաղային, այլ ներաշխարհն ու մտքերն արտահայտող լեզուն: «Ի վերջո, կյանքը պոեզիա չէ, ոչ էլ պոեզիան է կյանք, բայց նրանք մի միջին տարածություն ունեն, որտեղ հանդիպում են իրար. բանաստեղծությունը հենց այդ միջին տարածությունն է» (Էդոյան, 2001:107) :

Բանաստեղծական գործառույթն իր կարևորագույն տեղն է զբաղեցնում հատկապես գրականության մեջ՝ մասնավորապես պոեզիայում: Ըստ Ռ. Յակոբսոնի՝ յուրաքանչյուր խոսքային ակտ

ռճավորում է տվյալ իրավիճակը՝ կախված հասցեատիրոջից, բովանդակությունից, լսարանից (Якобсон,1975):

«Ի՞նչ է .... իրականում պոեզիան, եթե ոչ լեզվական այնպիսի մի գործառույթ, որի էությունն այն է, որ լեզուն դարձնի ան-գործառույթ, դադարեցնի նրա հաղորդակցական և տեղեկատվական գործառույթը, որպեսզի բացահայտի նրան նոր գործածության համար» (Агамбен, 2007:4): Այս գործառույթով ընդգծվում է լեզվական հաղորդակցության ոչ թե «ի՞նչ»-ը, այլ «ինչպե՞ս»-ը:

3. Կամային գործառույթ: Կամային գործառույթի ժամանակ խոսողը փորձում է այս կամ այն կերպ ազդել խոսակցի վրա՝ երբեմն գործածելով նաև հրամայական եղանակի բայեր: Հնագույն տեքստերում այս գործառույթը արտահայտվում էր նաև կոչականներով: Այս գործառույթով արտահայտված բառերը ձևաբանորեն, շարահյուսորեն և հաճախ նաև հնչյունաբանորեն տարբերվում են գոյականական և բայական այլևայլ քերականական կարգերից:

4. **Վերաբերական (համատեքստային) գործառույթ:** Վերաբերական գործառույթը հիմնված է խոսողի հաղորդած համատեքստի վրա: Վերաբերական գործառույթն ամենակիրառվողն է հաղորդակցության մեջ, քանի որ այն ուղղված է հաղորդակցվող նյութի փոխանցվող իմաստին և իրականությանը: Այն պարունակում է զուտ փոխանցվող տեղեկությունը: Այս գործառույթի միջոցով խոսողը խոսակցին տեղեկություն է փոխանցում՝ լինի գիտական աշխատանք, հանրային կայք թե պարզապես լրատվական նյութ:

5. **Շփման գործառույթ:** Շփման գործառույթի ժամանակ է որոշվում սկսել, շարունակել թե դադարել խոսակցությունը՝ ելնելով տվյալ իրադրությունից: Շփման գործառույթը իրականացվում է այնպիսի լեզվական տարրերի միջոցով, ինչպիսիք են նախադասությունները, բառակապակցությունները կամ առանձին բառերը: Հիմնականում դրանք վերաբերում են ողջունելուն, որպիսությունը հարցնելուն,

եղանակի մասին տեղեկություն փոխանցելուն կամ այդ հարցերին պատասխանելուն։

6. **Անդրլեզվական գործառույթ։** Ժամանակակից տրամաբանությունը և լեզվաբանությունը տարբերակում են լեզվի երկու մակարդակ՝ «օբյեկտային լեզու», որով խոսվում է շրջապատող աշխարհի մասին, և «անդրլեզու», որով խոսում են հենց լեզվի մասին։ Սակայն անդրլեզուն ոչ միայն տրամաբանների և լեզվաբանների հետազոտման առարկան է։ Այն էական դեր է խաղում առօրյա խոսքում։ Այլ կերպ ասած՝ անդրլեզվական գործառույթը դրսևորվում է ինչպես գիտական ոճում, այնպես էլ առօրյա-խոսակցականում։ Անդրլեզվական գործառույթն ուշադրությունը կենտրոնացնում է նշակարգի (կոդի) վրա, եթե խոսակիցները ցանկանում են ստուգել, թե արդյո՞ք դիմացինը ևս օգտվում է նույն նշակարգից։

Նշենք, որ ժամանակակից հանրալեզվաբանությունն առաջնորդվում է Ռ. Յակոբսոնի դասակարգմամբ՝ հաղորդակցման գործընթացները նկարագրելու համար։ Ի տարբերություն կառուցվածքային լեզվաբանության նախակարապետ, շվեյցարացի լեզվաբան Ֆ. դը Սոսյուրի հետևորդների, որոնք առաջարկում են ուսումնասիրել, եթե կարելի է այսպես ասել, լեզուն լեզվի մեջ՝ Յակոբսոնի դասակարգումն ընդգրկում է ոչ միայն լեզուն, այլ նաև լեզվակրին։

Բերված գործառույթները լեզվական և արտալեզվական միջոցներով լուծելի խնդիրներ են բանավոր հաղորդակցման ժամանակ։ Իսկ ահա գրավոր խոսքում այս խնդիրները լուծվում են միայն լեզվական միջոցներով։ Առանձնացված գործառույթները մեկնաբանելով՝ անհրաժեշտ է ասել, որ ամեն մի խոսքային հաղորդակցում հաղորդողի մտքերի արտահայտման (արտահայտչական գործառույթ) միջոց է հասցեատիրոջ՝ ընկալողի վրա ներգործելու համար (կամային գործառույթ), ընդ որում խոսքային հաղորդակցումը համապատասխան ձևավորում է ստանում (բանաստեղծական գործառույթ), հագենում է որոշակի

բովանդակությամբ (վերաբերական գործառույթ), շփման կարգավորման համար նախընտրում է հաղորդակցման այս կամ այն միջոցները (շփման գործառույթ), կազմավորում է տեքստը անդամատման, գնահատման, մեկնաբանման և այլ միջոցներով (անդրլեզվական գործառույթ) (Ապրեսյան, 2010:8):

Գրականություն

1. **Անտուան դը Սենտ Էքզյուպերի** (2017)- Մարդկանց երկիրը, Էդիթ պրինտ, Երևան, 184 էջ
2. **Բալյան Ա.Ա** (1983)- Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան: Լույս, 456 էջ
3. **Ապրեսյան Մ. Հ.,** (2010)- «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերակցությունը» Եր, 54 էջ
4. **Էդոյան Հ.,** (2001) Հետգրություն, Երևան, 396 էջ
5. **Ջահուկյան Գ.Բ. Խլղաթյան Ֆ.Հ.** (2007)-Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 140 էջ
6. **Marty A.,** (2010)-Untersuchungen Zur Grundlegung Der Allgemeinen Grammatik Und Sprachphilosophie, Volume 1, Halle, 796 p/
7. **Агамбен Дж.,** (2007) - Искусство, бездеятельность. Социологическое обозрение. N 7-8, 6 с.
8. **Арутюнова К Д.** (1973) Стратегия и тактика речевого поведения // Прагматические аспекты изучения предложения и текста. Киев, 184 с.
9. **Колшанский Г. В**. (1962) -О функции языка, М., 75-79 с.
10. **Якобсон Р. О.,** (1965) - О разработке целевой модели языка в европейской лингвистике в период между двумя войнами, (Новое в лингвистике,)М., вып-4) с. 372-377

Մարիամ Կարապետյան - դասախոս, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն
Mariam Karapetyanyan - lecturer, Faculty of European Languages and Communication, English Chair №1
Мариам Карапетян – преподаватель, Факультет европейских языков и коммуникации, кафедра английского языка № 1

Ներկայացվել է խմբագրություն՝ 17.12.22, տրվել է գրախոսության՝ 22.12.22 - 29.12.22, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի և պարբերականի խմբագրակազմի կողմից, ընդունվել է տպագրության՝ 29.12.22: